**Արձանագրություն N 2**
**ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով բենզինի (ռեգուլյար) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 14.01.2020թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բադինյան
Լ. Խալաթովա
Կ. Բարսեղյան
Շ. Իսախանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

**1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին**

---------------------------------------------------------------------------

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի դեկտեմբերի 30-ին, ժամը 11:30-ին.

բ) Գնման գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն.

գ) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել.

դ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Ֆլեշ>> ՍՊԸ | 964 000 | 36 000 | 200 000 | 1 200 000 |

1.2 Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշել է կասեցնել 30.12.2019թ. նիստը և հաջորդ նիստը հրավիրել հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.3 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել 10.01.2020թ. նիստը և ծանուցել բավարար գնահատված <<Ֆլեշ>> ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) 2020 թվականի հունվարի 14-ին ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու մասին:

1.4 Մասնակիցը գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին չի ներկայացել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**2. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին**

---------------------------------------------------------------------------

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | <<Ֆլեշ>> ՍՊԸ | բավարար |

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<Ֆլեշ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. Պետական գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.2 կետում նշված Մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:*

### 4. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Տ. Ղուկասյան

Անդամ՝ ______________________ Հ. Բաղինյան

______________________ Լ. Խալաթովա

______________________ Կ. Բարսեղյան

______________________ Ծ. Իսախանյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Ն. Հարությունյան